

Բաշխուռնն մրցանակաց և թօսք Նա-  
բոյեռնի կայսեր Լոնտրայի հաւնաշ-  
խարհական Արուեստահանդիսէն  
պարակաւոր Գաղղիացոց :

Գաղղիացոց կայսրը Նաբոլէոն Գ  
տարուոյս յունուարի 25ին Լուվրի մեծ  
սրահը Լոնտրայի Արուեստահանդիսէն  
Գաղղիացոց տրուած մրցանակները  
բաշխեց : Աս հանդիսին ներկայ էին  
Արուեստահանդիսին համար սահմա-  
նուած կայսերական Յանձնաժողովոյն  
անդամները , Արուեստահանդէսը բան  
խաւրդը բոլոր Գաղղիացիք . աս ետքին  
ներս կայսերական գահուն աջ ու ձախ  
կողմը երկու գունդ բաժնուած կեցած  
էին . շատ մը հրաւիրեալ պատուաւոր  
անձինք ու տիկնայք բարձրագոյն վեր-  
նատունները լեցուած էին . իսկ աջա-  
կողմեան վերնատունը կեցած էին օ-  
տար տէրութեանց դեսպանները , ձա-  
խակողմեան վերնատան մէջ ալ տէ-  
րութեան պաշտօնէից , մարաշախտնե-  
րու և ուրիշ երևելի պաշտօնատեարց  
տիկնայքը կեցած էին : Կայսերական  
գահուն մօտն էին տէրութեան պաշ-  
տօնեայքն և ուրիշ մեծ իշխանաւորք ,  
և գահուն աջ ու ձախ կողմը աստիճանի  
մը վրայ կայնած էին Արուեստահան-  
դիսին երգութեալ դատաւորքը ( jury ) :  
Քսանըմէկ թնդանօթի որոտն աւետեց  
կայսեր գալուտը . որ և մեծ զօրավա-  
րի հագուստով կայսրուհւոյն հետ միա-  
տեղ՝ առջևէն որդին կայսերազուն իշ-  
խանն՝ ու ետևէն կայսերական ընտա-  
նեաց իշխաններն ու իշխանուհիներն և  
ուրիշ պալատականներ , ցորեկուրնէ  
ետև ժամը մէկին եկաւ . մտաւ սրահը .  
բոլոր հանդիսականք միաբերան ազա-  
ղակաւ ողջունեցին զկայսերական ըն-  
տանիքը Կեցցէ Կայսրն . Կեցցէ Կայս-  
րուհին . Կեցցէ Կայսերազունն իշխա-  
նըն գոչելով : Կայսրն ելաւ նստաւ իր  
գահը , իր ձախակողմը կայսրուհին  
նստաւ , աջ կողմն ալ որդին կայսերա-

զուն իշխանն ոտքի վրայ կայնեցաւ .  
գահուն չորս կողմը շարուեցան հա-  
րիշր պահակապանք (cent gardes) և  
սուած կայսերական անձնապահապե-  
տաց գունդը : Նախ Նաբոլէոն իշխանը՝  
Արուեստահանդիսին համար սահմա-  
նուած կայսերական Յանձնաժողովոյն  
նախագահը ճառ մը խօսեցաւ , որ ծա-  
փահար գովութեամբ ընդունուեցաւ .  
ետքէն կայսրը նստած տեղէն ասոր  
պատասխանը տուաւ : Նաբոլէոն Գին  
աս խօսակցութիւնը բոլոր Եւրոպայի  
մէջ մեծ տպաւորութիւն ըրաւ և օ-  
րագրաց երկար գովեստներուն նիւթ  
եղաւ թէ մէջը պարունակած իմաստ-  
ներուն՝ դարուս քաղաքակիրթութեան  
ուղիղ ոգւոյն ճշդիւ համապատասխա-  
նելուն , և թէ նոյն իսկ բացատրու-  
թեանց ձևին ընտիր կատարելութեանն  
համար : Անգղիոյ տէրութիւնն ալ իր  
Բարիզու դեսպանին ձեռքը շնորհա-  
կալ եղաւ Նաբոլէոն Կայսեր՝ այս խօ-  
սակցութեանս մէջ հրապարակաւ Անգ-  
ղիոյ տուած գովեստներուն համար :

Մենք ալ մեր ընթերցողաց հաճոյ-  
տկան զուարճութիւն մը համարելով ,  
այս ճառին հաւատարիմ թարգմանու-  
թիւնը կը դնենք հոստեղ , որ այնչափ  
քաղաքակիրթ աշխարհի հետաքննու-  
թեանը նիւթ եղաւ :

Տեարք ,

« Դուք վայելչապէս ներկայացու-  
ցիք զԳաղղիա օտար երկրի մէջ : Կու-  
գամ՝ ես հիմա ասոր համար ձեզի շնոր-  
հակալ ըլլալու . որովհետև հանրականա-  
րուեստահանդէսները՝ սովորական բա-  
զարներ չեն , հապա ժողովրդոց զօ-  
րութեանն ու հանճարոյն փառաւոր  
յայտնութիւններն են :

« Ընկերութեան մը վիճակը՝ իրեն  
տարբերացն առաւելագոյն կամ նուա-  
զագոյն աստիճանի ըրած յառաջդի-  
մութեանէն կը տեսնուի . և որովհետև  
ամէն յառաջդիմութիւնք միատեղ

կը քալեն, երկրի մը քաղաքակրթութիւնը դատելու համար՝ բաւական է նոյն ազգին հանճարոյն մէկ արգասիքը միայն քննել։ Անոր համար երբ այսօրուան օրս հին ժամանակներու արուեստական գործ մը գտնելու ըլլանք, անոր աւելի կամ նուազ կատարելութենէն կը դատենք՝ պատմութեան ո՞ր շրջանին վերաբերած ըլլալը։ Թէ որ մեր հիացմանն արժանի ըլլայ, ապահով եղիք՝ որ ան դարէն է, յորում ընկերութիւնը աղէկ հաստատեալ՝ մեծ էր զինուք, բանիւ, գիտութեամբք և արուեստիւք։ Ուրեմն անտարբեր բան չէ Գաղղիոյ սահմանուած պաշտօնին համար՝ մեր ճարտարութեան բերքերը եւրոպիոյ աչքին առջևը դնելնիս. ասոնք միայն ճշգրիտ վկայք են մեր բարոյական ու քաղաքական վիճակին։

«Ուրախակից եմ՝ ձեզի ազգութեամբ ու յարատեւութեամբ պայքարելնուդ համար երկրի մը հետ՝ որ քան զմեզ առաջ անցած էր քանի մը տեսակ ճարտարութեանց մէջ։ Ահաւասիկ վերջապէս շատոնց՝ ի վեր գուշակուած՝ ահաւոր յարձակումը Բրիտանական երկրին վրայ՝ կատարուեցաւ։ Անցաք դուք նեղուցը, անվախ քաջութեամբ Անգղիոյ մայրաքաղաքին մէջ հաստատուեցաք. կտրրճութեամբ՝ ճարտարութեան ծեր ու փորձ զինուորներուն հետ կռուեցաք։ Աս պատերազմն առանց փառաց չեղաւ, և ես կու գամ այսօր քաջաց մրցանակն ձեզի տալու։

«Աս տեսակ պատերազմը, որ երբէք արիւնոտ զոհեր չընէր, շատ ուրիշ արժանիք ունի. ազնուական նախանձաւորութիւն մը կը յարուցանէ, վաճառականութեան այն դաշնագրութիւնները կ'ընէ, որոնք ժողովուրդները իրարու կը մօտեցընեն ու ազգային նախապաշարումները կը վերցընեն՝ առանց տկարացընելու հայրենեաց սէրը։ Աս նիւթական իրաց փոխանակութենէն ուրիշ ազնուագոյն փոխանակութիւն մը կը ծագի, որ է գաղափարաց փոխանակութիւն։ Եթէ օտարը

մեր շատ օգտակար ու աղէկ բաներուն վրայ կը նախանձին, մենք ալ դեռ տնոնցմէ շատ սորվելիք բաներ ունինք։ Անոր համար անտարակոյս զարմացաք Անգղիոյ մէջ տեսնելով այդ անսահման ազատութիւնը ամէն տեսակ կարծիք յայտնելու ու ամէն տեսակ ընկերական ձեռնարկութիւններ առաջ տանելու։ Մէկալ կողմանէ ալ դիտեցիք անշուշտ ջերմ՝ վիճաբանութեանց ու հետամտութեանց վտանգներուն մէջ պահուած կատարեալ բարեկարգութիւնը. վասն զի անգղիական ազատութիւնը միշտ կը յարգէ գլխաւոր հիմունքն՝ որոնց վրայ հաստատուած են ընկերութիւնն ու իշխանութիւնն։ Ասով է որ այդ ազատութիւնը չքանդէր, այլ կը զարգացունէ. իրեն ձեռքը կըրած ջահը ոչ հրձիգ է, այլ լուսարբեր. և առանձնական ձեռնարկութեանց մէջ անհատից ազատ գործունէութիւնը անխոնջ եռանդեամբ բանելով՝ կ'ազատէ զկառավարութիւնը՝ ազգին կենսական զօրութեանց միակ շարժիչն ըլլալէն. անոր համար տէրութիւնը Անգղիոյ մէջ փոխանակ ինքը ամէն բան անձամբ կարգաւորելու, իւրաքանչիւր անձանց գործոց պատասխանատուութիւնն իրենց կը ձգէ։

«Ահաւասիկ ինչպիսի պայմաններով անխախտ կը մնայ Անգղիոյ մէջ այդ զարմանալի գործունէութիւնը, այդ բացարձակ անկախութիւնը։ Գաղղիան ալ պիտի հասնի այդ վիճակին այն օրը, երբ կատարեալ ազատութեան հաստատութեանն անհրաժեշտ հիմունքն ամրացընելու ըլլանք։ Աշխատինք ուրեմն մեր ամենայն ճգամբը նմանելու աս օգտակար օրինակներուն. անդադար աղէկ խելամտութեամբ թափանցեցէք՝ քաղաքական ու վաճառականական ուղիղ վարդապետութեանց մէջ. միացէք նովին պահպանողական խորհրդով, և առանձնականաց եռանդուն բերումը (spontanéité) մղեցէք առ այն ամենայն որ գեղեցիկ ու օգտակար է։ Աս պիտի ըլլայ ձեր ճիգը. իսկ իմն՝ հասարակաց կարծեաց իմաստուն

յառաջագիմութիւնը կանոն բռնել իմ ընելու բարեկարգութեանցս և միանգամայն տեսչական (administratif) արգելքները վերցընելու ձեր ընթանալու ճամբէն:

«Ասանկով ամէնքնիս ալ մեր պարտքը կատարած կ'ըլլանք, և մեր անցքը աս էրկրիս վրայէն անօգուտ չըլլար, որովհետեւ մեր որդւոցը թողած կ'ըլլանք՝ կործանեալ նախապաշարմանց ու մշտնջենաւորապէս թաղուած ատելութեանց աւերակացը վրայ կանգուն՝ գլուխ հանած մեծ աշխատութիւններ ու բեղմնաւոր ճշմարտութիւններ:

«Խօսքս չեմ վերջացրներ առանց շնորհակալ ըլլալու կայսերական յանձնաժողովին ու անոր նախագահին այն իմաստուն փութոյն համար՝ որով կարգաւորեցին դադղիական Արուեստահանդէսն 'ի Լոնտրա, և այն արդարասէր անկողմնասիրութեանն համար՝ որով մրցանակի արժանաւորներն ընտրեցին: Ասիկա ալ նոր հաւաստիք մըն է աճեցընելու իմ վստահութիւնս ու համարումս իրենց վրայ»:

Աս ճառը, որ շատ անգամ ընդհատեցաւ երկայն ու եռանդագին ծափահարութիւններէ, լմննալէն վերջը կեցցէ Կայսրն բազմաձայն աղաղակաւ թնդացուց հանդիսին դահլիճը:

Յետոյ Պ. Ռուէ, վաճառականութեան, երկրագործութեան ու հասարակաց շինութեանց պաշտօնեայն, Լոնտրայի Արուեստահանդիսէն վարձատրուած Գաղղիացւոց անուններն հրատարակեց, որոնց նաև Կայսրն աս առթիւ Գաղղիոյ Լէգէոն Պատուոյ կարգին չքանչանք շնորհած էր:

Երբ վարձատրուողի մը անունը կը տրուէր, պալատին հանդիսապետներէն (maître de cérémonie) մէկը մըրցանակը նաբողէոն իշխանին կու տար, ան ալ Կայսեր կը ներկայացընէր, և իւրաքանչիւր վարձատրեալ կայսերական գահուն աստիճաններէն վեր ելլելով՝ կ'երթար Կայսեր ձեռքէն իր մըրցանակը կ'ընդունէր:

Ժամը երկուքին պարզեաբայիսութիւնն լմնցաւ: Կայսրը, Կայսրուհին ու կայսերական տան իշխանները ելան դահլիճէն հանդիսականաց ծափահարող շայններովն և թնդանօթի որոտմանքներովը, որ հանդիսին լմննալը կը ծանուցանէր ժողովրդեան:

Բարիգոշ Մոշրատեան վարժարանը  
1862, Օգոստոս 12:

Ինչո՞վ մարդկութիւնը, մանաւանդ թէ ըսենք մանկան այն տխեղծ և փափուկ հասակն, որուն վրայ բնութիւնն իր առաջնապարզ և տուրքերը դրոշմած է 'ի ծնէ, կը բարգաւաճի, կը զօրանայ և կը հաստատուի, եթէ ոչ ուղիղ և ճարտար դաստիարակութեամբ, որ և այդ հիման վրայ հաստատուելով ապագայ երջանիկ յոյսերու կ'առաջնորդէ. հայրենեաց, հասարակութեան և նոյն իսկ իւրաքանչիւր դր առանձինն իր կացութեանն օգտակար և ոչ անպիտան կ'ըլլայ: Ինչո՞վ կը զօրանայ ազգ մը, հայրենասէր ժողովուրդ մը՝ և կը թօթափէ անհոգ և անխնամ ծուլութեան մը լուծը՝ որ ստուգիւ բնական և բարոյական յետամնացութեան նշան է, եթէ ոչ դարձեալ դաստիարակութեամբ, որ անհրաժեշտ երկրորդ և ազնուագոյն սրնունդ մը պէտք է ըլլայ հայրենեաց դեռաբոյս որդւոցն համար, յետ ջամբելու մայրական կենսատու կաթն: Ի՞նչ է այն մեծ խտրութիւնն որ կը դրուի այլ և այլ ազգաց նկատմամբ, ընդ մէջ մարդավար և կիրթ ժողովրդոց Եւրոպիոյ, և անուպայ ու բարբարոս ազգաց. զանազանելով զգեղնուկն 'ի քաղաքացւոյն՝ և զքաղաքացին ազնուական և բարեկիրթ անձէ, որով կը տարբերի նաև դաստիարակութեան կերպն ըստ զանազան ժողովրդոց և իւրաքանչիւր խառնուածոյ և սովորութեանց: Ուրեմն ի՞նչ պէտք է ընեն դաստիարակը և հայրենեաց փրկ-